

ԲԵՆՏՈՆԻՏԱՅԻՆ ՔՍՈՒՔՆԵՐԻ ՇՓԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
Ա. Պողոսյան, Տ. Սարտիրոսյան, Ա. Համբարձումյան

Մեքենաների և մեխանիզմների շփահանգույցներում օգտագործվող քսուքների (պլաստիկ յուղման նյութերի) արտադրությունում լայն տարածում են ստացել յուղային միջավայրի համակողմանի կառուցվածքադաշտայինները՝ օրգանաբենտոնիտները (բենտոնիտներ)։ Սրանք բնական մոնտորիլոնիտային կավերի (բենտոնիտների) և օլեաֆիլիզատորային մակերևութաակտիվ նյութերի, մասնավորապես չորրորդային ամոնիումի աղերի, փոխազդեցության արգասիքներ են։ Տարբեր յուղային միջավայրերում ձևավորելով թիքսոտրոպային կառուցվածքներ՝ բենտոնիտները միաժամանակ բանձրացնում են միջավայրը՝ բարձրացնելով յուղի մածուցիկությունը։ Նախնական հետազոտություններն ապացուցել են քսուքների համար տեղական բենտոնիտի օգտագործման տեխնիկատեխնիկական արդյունավետությունը։

Կավային հիմքով բենտոնիտային քսուքների (ՔՔ) պատրաստման համար որպես բանձրացուցիչ օգտագործվել է Իջևանի Սարիգյուղ հանքի բենտոնիտը։ Այն հեղուկ միջավայրում սեղմմանտաքային մեթոդով նախապես գտվել է բազալտի և կվարցի արբազիվային բաղադրամասերից։ Համեմատական փորձարկումների նպատակով գտված և 30 մկմ-ից փոքր հատիկայնությամբ, ինչպես նաև չգտված՝ «արբազիվային» և 30...80 մկմ հատիկայնությամբ ֆրակցիաների ջրային կախությունները խտանվել են AB-18 կատամինի լուծույթի հետ բենտոնիտի հատիկների մակերևույթի կատիոնափոխանակման համար հետևյալ քիմիական ռեակցիային համապատասխան՝



Պրոցեսը շարունակվում է մինչև բենտոնիտային կախույթի ամբողջությամբ փաթկացման, այսինքն՝ «բենտոն»-ի մանրահատիկների առաջացման, և նստեցման ավարտը։ Կոմպոզիտի ստացման համար որպես բազային յուղ օգտագործվել է Մ-Դ-Ա-68 մակնիշի արդյունաբերական յուղը (ՊՕՍՏ 17479-87)։ Համեմատական փորձարկումների համար պատրաստվել է գերմանական յուղամետ «բենտոն»-ի հիմքով պլաստիկ յուղման փորձամուշ (ՔՔ302), ինչպես նաև օգտագործվել է ԱՊՀ տարածքում լայն տարածում գտած Անտոլ-24 քսուքը (ՊՕՍՏ 21150-75)։ Հետազոտվող մուշները ներկայացված են աղ.1-ում։

Աղյուսակ 1


Նմուշ	Բազային յուղ		Թանձրացուցիչ		
	Մակնիշ	Կինեմատիկ մածուց-ն 40°C, մմ <sup>2</sup> /վրկ	Պարունակությունը, կշռ. %	Տեսակը	
ՔՔ101	Մ-Դ-Ա-68	65	55	բենտոն հայկական	արբազիվային
ՔՔ102			50		
ՔՔ202			47	բենտոն գերմանական	գտված
ՔՔ302			20		
Անտոլ-24	Մ-Դ-Ա-100	97	12	լիթվոնի օբյեկտնարատ-12	

Քսուքայուղային կոմպոզիտների շփագիտական հատկություններն ուսումնասիրվել են MAST տիպի չորսգնդային մեքենայի վրա ՊՕՍՏ-9490-88-ին համապատասխան (նկ.1)։ Փորձերը կատարվել են 12.7 մմ տրամագծով, ՇԽ-15 մակնիշի պողպատե գնդերի օգտագործմամբ սենյակային ջերմաստիճանի պայմաններում 0.23վրկ<sup>-1</sup> (600 ռոպ<sup>-1</sup>) սառիքի արագությամբ։ Արդյունքում գնահատվել են շփագնդերի *h* մաշվածքի չափի,  $U_{որ}$  հարակցման ցուցանիշի, կերամաշման  $P_4$  բեռնվածքի և շփման  $f$  գործակցի արժեքները։



Նկ.1. Չորսգնդային շփամեքենայի շփման համազույգի սխեման

Բազային յուղի համեմատ առաջարկվող բենտոնիտային քսուքների քերամաշման բեռնունակությունն աճել է մոտ 2 անգամ, իսկ շփման գործակցը նվազել է 30%-ով (նկ.2)։ Բենտոնիտի մանրահատիկացման և արբազիվային բաղադրիչներից գտման սեղմմանտաքային պրոցեսը նպաստել է քսուքի հակաշփական բնութագրի բարձրացմանը։ Դրանք չեն զիջում համեմատական փորձամուշին (ՔՔ302) և գերազանցում են Անտոլ-24-ի ցուցանիշները։ Բենտոնիտային քսուքների բարձրաբեռնունակությունը (աղ.2) հիմնավորվում է բանձրացուցիչի բենտոնիտի կմախքի շերտավոր կառուցվածքով՝ պողպատի մակերևույթին գոյացնում են տեղաշարժի նկատմամբ բարձր դինամիկություն ունեցող սահմանային շերտեր, որոնց շնորհիվ աճում է դրանց բեռնունակությունը։ Ջերմաստիճանի բարձրացումը շփահակում, ի տարբերություն Անտոլ-24, առանձնապես չի ազդում առաջարկվող բենտոնիտային քսուքների շփման պրոցեսի բնութագրի վրա, իսկ կերամաշման առաջանում է շփահակում բարձր ճնշման ներքո մակերևութային շերտերի պլաստիկ հոսունության շնորհիվ՝ մակերևութային քաղանթների խզվածության հետևանքով աղիեզիոն բերծման պատճառով։



Նկ.2. Մաշվածքի չափի և շփման գործակցի կախումներն առանցքային բեռնվածքից

Աղյուսակ 2

Ցուցանիշ	Փորձամուշների հարակցման ցուցանիշի և կերամաշման բեռնվածքի արժեքները					
	ՔՔ101	ՔՔ102	ՔՔ202	ՔՔ302	Մ-Դ-Ա-68	Անտոլ-24
$U_{որ}$	906	882	877	928	450	1000
$P_4$	1600	1500	1500	1400	800	1400


Այսպիսով, բենտոնիտի հատիկների մանրացումն ու դրանց արբազիվային բաղադրամասից հեղուկ միջավայրում սեղմմանտաքային եղանակով գտումը բարելավում է բենտոնիտային քսուքի շփագիտական հատկությունները, ապահովելով քսուքի անհրաժեշտ բեռնունակությունը։ Միևնույն ժամանակ ՔՔ102 չգտված փորձամուշի հակաշփական հատկությունները հիմնավորում են պլաստիկ յուղման նյութերի գործնական առավելություններից ևս մեկը՝ բենտոնիտային քսուքները կարելի է օգտագործել նաև արբազիվային միջավայրի պայմաններում աշխատող սարքավորումների ու մեխանիզմների շփահանգույցներում։

Հետազոտությունը կատարված է Բաղաբացիական Հետազոտությունների և Չարգացման Հիմնադրամի (CRDI) աջակցությամբ։

ԱԿՏՈՍՈՐԻԼԻ ՀԱԿԱԲԼՈՎԱԿՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՐԳԵԼԱԿԱՅԻՆ ՍԱՐՔԻ ԹՐԹՈՒԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ա. Պողոսյան, Ա. Բախչյան, Ա. Թամարզով

Ավտոմոբիլի արգելակային սարքում առաջացող թրթռատատանումների վրա զգալի ազդեցություն ունեն նաև արգելակման ընթացքում բուն ավտոմոբիլի վրա ազդող ուժերը։ Այդ պատճառով որպես հաշվարկային ընտրվել է նկ.1-ում պատկերված ավտոմոբիլի մոդելն ամբողջությամբ, որը նկարագրում է արգելակման ընթացքում ավտոմոբիլի շարժումն ուղիղ տեղամասում, հաշվի առնելով անիվների վրա նորմալ հակազդումների դինամիկական վերադասավորությունը։



Նկ.1 Ավտոմոբիլի արգելակման հաշվարկային սխեման

Ավտոմոբիլի արգելակման պրոցեսի դիֆերենցիալ հավասարումների համակարգն ընդգրկում է շարժման ընդհանուր հավասարումը, արգելակման ժամանակ ավտոմոբիլի ծանրության կենտրոնի տեղաշարժի հավասարումը ծանապարհին ուղղահայաց առանցքի երկայնքով և ծանապարհի շոշափող հակազդումների հետևանքով արգելակման ընթացքում ավտոմոբիլի ճոճման հավասարումը երկայնական առանցքի նկատմամբ՝

$$\begin{cases} M\ddot{X} = R_{x1}^1 + R_{x2}^1 + R_{x1}^2 + R_{x2}^2 \\ M\ddot{Z} = R_{z1}^1 + R_{z2}^1 + R_{z1}^2 + R_{z2}^2 - Mg \\ I_y \ddot{\varphi}_y = (R_{x1}^1 + R_{x2}^1 + R_{x1}^2 + R_{x2}^2)(h_k - z) - (R_{z1}^1 + R_{z2}^1)a_k + (R_{z1}^2 + R_{z2}^2)b_k \end{cases} \quad (1)$$

Անվի անկյունային արագությունը որոշվում է ուժային հավասարակշռման պայմանից՝

$$I_{\omega\omega} \frac{\partial \omega_{\omega\omega}}{\partial t} = M_{\omega} - R_{x_i} r_{\omega} \quad (2)$$

որտեղ  $I_{\omega\omega}$ -ն անվի իներցիայի մոմենտն է,  $M_{\omega}$ -ն արգելակային մոմենտն է,  $r_{\omega}$ -ն անվի կցման գործակիցն է ծանապարհի հետ:

Ավտոմոբիլի սկավառակակոճղակավոր արգելակային սարքի տատանողական պրոցեսը նկարագրվում է հետևյալ դիֆերենցիալ հավասարումների համակարգով՝


$$\begin{cases} I\ddot{\varphi} = -T_f \\ m\ddot{x} = -cx + F_f \end{cases} \quad (3)$$

որտեղ  $T_f$ -ը և  $F_f$ -ն արգելակման մոմենտը և շփման ուժն են շփահպակում,  $cx$ -ն իրանի հետ կոճղակի առածգական կապի ուժն է,  $\ddot{x}$ -ը և  $\ddot{\varphi}$ -ը կոճղակի և արգելակային սկավառակի անկյունային արագացումներն են:

Նշված հավասարումների համակարգում (3) արգելակային կոճղակների վրա ազդող ճնշումն ընդունված է հաստատուն, ինչը հաշվի չի առնում հակաբլոկավորման համակարգի ազդեցությունը, որի հիմնական պայմանը ճնշման փոփոխման միջոցով անվի բլոկավորման կանխումն է: Ուստի ավտոմոբիլի արգելակման ընթացքում արգելակային սարքում առաջացող թրթռումների ուղումնասիրման համար (1)-(3) հավասարումները համակարգվում են ծանապարհի հետ անվի կցման ուժի և արգելակային սկավառակի անկյունային արագության կախման պայմանով՝

$$\begin{cases} M\ddot{X} = R_{x1}^1 + R_{x2}^1 + R_{x1}^2 + R_{x2}^2 \\ M\ddot{Z} = R_{z1}^1 + R_{z2}^1 + R_{z1}^2 + R_{z2}^2 - Mg \\ I_y \ddot{\varphi}_y = (R_{x1}^1 + R_{x2}^1 + R_{x1}^2 + R_{x2}^2)(h_k - z) - (R_{z1}^1 + R_{z2}^1)a_k + (R_{z1}^2 + R_{z2}^2)b_k \\ I\ddot{\varphi} = T_f - R_{x_i} r \\ m\ddot{x} = -cx + F_f \end{cases} \quad (4)$$

Հավասարումների համակարգը (4) լուծվել է թվային եղանակով MathCAD 2000 Pro հատուկ ծրագրային ապահովման փաթեթի միջոցով, որի արդյունքները, որպես օրինակ, գրաֆիկական տեսքով պատկերված են նկ.2-ում:



Նկ.2. Արգելակային կոճղակների տատանումների սպեկտրը (ա) և արգելակային մոմենտի կախումը (բ) ժամանակից

Հակաբլոկավորման համակարգով հանդերձված ավտոմոբիլի արգելակման ընթացքում արգելակային սարքի կոճղակների տատանման ամպլիտուդը համեմատաբար մեծանում է (նկ.2ա), իսկ բարձրահաճախային բաղադրիչը՝ նվազում: Արգելակման պրոցեսի ժամանակ արգելակային մոմենտի տատանումները (նկ.2բ) հետևանք են անվի բլոկավորվելուց կանխելու համար հակաբլոկավորման համակարգի միջոցով կոճղակների վրա ճնշման կարգավորման:

Հաշվարկային մոդելը հնարավորություն է տալիս հետազոտել արգելակի թրթռակալությունը՝ հաշվի առնելով հակաբլոկավորման համակարգի ազդեցությունը, ինչպես նաև տարբեր ծանապարհային պայմաններում ավտոմոբիլի շահագործումը:

## ՋՈՒԳԱՅԵՈՒ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏՈՐՆԵՐԻ ՈՒՃԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### Ա. Զգմայան


Աշխատանքում ներկայացված է զուգահեռ մանիպուլյատորների դինամիկայի ուղիղ խնդրի լուծման մի պարզեցված մեթոդ, որը հնարավորություն է տալիս բարդ կառուցվածք ունեցող մեխանիզմներում հեշտությամբ որոշել ինչպես հակազդումները կինեմատիկական զույգերում, այնպես էլ այն շարժիչային ուժերը կամ մոմենտները, որոնք ապահովում են մեխանիզմների օղակների նախապես տրված շարժման օրենքները:

Մեթոդի էությունը պարզաբանենք զուգահեռ մանիպուլյատորների ընտանիքին պատկանող մեխանիզմներից բարդագույններից մեկի՝ Ստյուարտի հարթակային տիպի մանիպուլյատորի օրինակով [1]: Ստուվի տարրալուծելով հարթակի և հարթակը հիմքի հետ միացնող շղթաների կազմած սֆերիկ զույգերը կատանանք վեց՝ իրարից անկախ եռաշարժուն բաց կինեմատիկական շղթաներ և առանձին վերցված հարթակը, որոնք պատկերված են նկ. 1-ում և 2-ում:


Տարրալուծված զույգերում առաջացած հակազդման  $R_{A3i}$  ( $i=1, 2, \dots, 6$ ) ուժերի  $R_{A3iX}$ ,  $R_{A3iY}$  և  $R_{A3iZ}$  բաղադրիչների որոշման համար վարվում ենք հետևյալ կերպ: Նախ կազմում ենք հարթակի (նկ. 2) շարժման հավասարումները

$$tr((T \cdot H - \Phi) \cdot \theta'_k \cdot T') = 0 \quad k=1, 2, \dots, 6 \quad (1)$$

որտեղ  $T$ -ն և  $T'$ -ը հարթակի՝ համապատասխանաբար դիրքի և արագացման մատրիցներն են,  $H$  -ը իներցիայի թեճգրոն է,  $\theta'_k$  -ն ( $k=1, 2, \dots, 6$ ) պրոյեկտոր մատրիցներն են,  $\Phi$  -ը հարթակի վրա ազդող արտաքին ուժերի մատրիցն է, "tr"-վերին ինդեքսները համապատասխան մատրիցների տրանսպոնանցման նշանն է, իսկ "tr" սիմվոլը արտաքին փակագծերի մեջ եղած մատրիցների հետքի որոշման նշանն է: Նշված բոլոր մատրիցների տարրերի որոշման եղանակները բերված են [2] աշխատությունում, որոնք ծավալի սղության պատճառով այստեղ չեն դիտարկվում:



Նկ. 1



Նկ. 2

Վերը նշված զույգերի տարանջատելուց հետո այդ զույգերում առաջացած հակազդման ուժերը հարթակի և ստացված վեց կինեմատիկական շղթաների (նկ. 1; 2) համար հանդիսանում են արտաքին ուժեր, որոնց բաղադրիչները մտնում են  $\Phi$  ուժերի մատրիցի տարրերի մեջ: Կատարելով (1) մատրիցային հավասարումների մեջ եղած գործողությունները և խմբավորելով հակազդման ուժերի  $R_{A31X}$ ,  $R_{A31Y}$  և  $R_{A31Z}$  ( $i=1, 2, \dots, 6$ ) անհայտ բաղադրիչների նկատմամբ, կստանանք նրանց որոշման համար հետևյալ 6 գծային հավասարումների համակարգը

$$\sum_{i=1}^6 (a_{ik} \cdot R_{A31X} + b_{ik} \cdot R_{A31Y} + c_{ik} \cdot R_{A31Z}) = d_k \quad k=1, 2, \dots, 6 \quad (2)$$

Այնուհետև, յուրաքանչյուր բաց կինեմատիկական շղթայի համար (նկ. 1), օգտվելով [2]-ում ստացված

$$Q_{ij} = tr(\lambda_{ij} \cdot \Lambda'_{ij} \cdot \theta' \cdot T'_{i,j-1}) \quad i=1, 2, \dots, 6; j=1, 2 \quad (3)$$

արտահայտություններից, որոշում ենք այդ շղթաների  $q_{i1}$  և  $q_{i2}$  ( $i=1, 2, \dots, 6$ ) կորդինատներին բերված  $Q_{ij}$  ուժերը, որտեղ

$$\lambda_{i3} = \Phi_{i3} - T_{i3} \cdot H_{i3}; \quad \lambda_{ij} = \lambda_{i,i+1} \cdot \Lambda'_{i,j-1} + \Phi_{ij} - T_{ij} \cdot H_{ij} \quad (4)$$

$\Lambda'_{i,j}$ -ն շղթաների օղակների հետ կոշտ միացված շարժական համակարգերի միջև կորդինատական ձևափոխության մատրիցներն են,  $T_{i,j}$ -ն և  $\bar{T}_{i,j}$ -ը նրանց օղակների համապատասխանաբար դիրքի և արագացման մատրիցներն են,  $H_{ij}$ -ն օղակների իներցիայի բենզորներն են, իսկ  $\Phi_{ij}$ -ն օղակների վրա ազդող արտաքին ուժերի մատրիցներն են:

Էանի որ մեխանիզմի բաղադրության մեջ մտնող  $q_{i1}$  և  $q_{i2}$  պարամետրերը անկառավարելի կախյալ փոփոխականներ են, ապա նրանց բերված  $Q_{ij}$  ուժերը հավասար են գրոյի, որի հետևանքով (3) հավասարությունները վեր են ածվում հետևյալ 12 հավասարումների համակարգի

$$tr(\lambda_{ij} \cdot \Lambda'_{ij} \cdot \theta' \cdot T'_{i,j-1}) = 0 \quad i=1, 2, \dots, 6; j=1, 2$$

(4) արտահայտությունների հաշվառմամբ, կատարելով այս հավասարումների մեջ գտնվող գործողությունները և խմբավորելով հակազդման ուժերի  $R_{A31X}$ ,  $R_{A31Y}$  և  $R_{A31Z}$  ( $i=1,$

2, ..., 6) անհայտ բաղադրիչների նկատմամբ, կստանանք հետևյալ 12 գծային հավասարումների համակարգը

$$\alpha_{ij} \cdot R_{A31X} + \beta_{ij} \cdot R_{A31Y} + \gamma_{ij} \cdot R_{A31Z} = \delta_j \quad i=1, 2, \dots, 6; j=1, 2 \quad (5)$$

Կցելով (2) և (5) հավասարումների համակարգերը՝ կստանանք 18 համատեղելի գծային հավասարումների համակարգ հակազդման 18 անհայտ  $R_{A31X}$ ,  $R_{A31Y}$  և  $R_{A31Z}$  ( $i=1, 2, \dots, 6$ ) պարամետրերի նկատմամբ:

Նշենք, որ այստեղ լուծվում է դինամիկայի ուղիղ խնդիրը, որտեղ համարում ենք, որ ժամանակի ցանկացած պահին մեզ հայտնի են բոլոր օղակների դիրքերի և արագացումների մատրիցաների տարրերի արժեքները: Այդ դեպքում հեշտ է տեսնել, որ օղակների իներցիայի բենզորի տարրերի տրված արժեքների դեպքում (2) և (5) հավասարումների համակարգերում եղած  $a_{ik}$ ,  $b_{ik}$ ,  $c_{ik}$ ,  $d_k$ ,  $\alpha_{ij}$ ,  $\beta_{ij}$ ,  $\gamma_{ij}$  և  $\delta_j$  գործակիցները ժամանակի ցանկացած պահին նույնպես դառնում են հայտնի մեծություններ:

Համատեղ լուծելով (2) և (5) հավասարումների համակարգը՝ ժամանակի ցանկացած պահին որոշում ենք տարրալուծված կինեմատիկական զույգերում հակազդման  $R_{A31X}$ ,  $R_{A31Y}$  և  $R_{A31Z}$  ( $i=1, 2, \dots, 6$ ) պարամետրերը, որոնք առանձին վերցված եռաշարժուն շղթաների (նկ. 1) համար դառնում են որպես հայտնի արտաքին ուժեր: Այս հանգամանքը բույլ է տալիս հեշտությամբ որոշել այդ շղթաների՝ մյուս զույգերում առաջացած հակազդումների անհայտ պարամետրերը և շարժիչային ուժերը կամ մոմենտները: Չրա համար անհրաժեշտ է օգտվել (3) հավասարումներից: Այդ հավասարումների մեջ  $\theta$ -ն փոխարինելով [2] աշխատանքում բերված  $\theta_k$  ( $k=1, 2, \dots, 6$ ) պրոյեկտող մատրիցներով, կստանանք բոլոր շղթաներում եղած հակազդումների անհայտ պարամետրերը և շարժիչային ուժերը կամ մոմենտները:

#### Գրականություն

1. Stewart D. A platform with six degree of freedom // Proceedings of I. Mech. E. 1965-66. - Vol. 180. - Pt. 1. - P. 371-386.
2. Попов Е.П., Верещетин А.Ф., Зенкевич С.А. Манипуляционные роботы, динамика и алгоритмы. - М.: Наука, 1978. - 398 с.

## КОНТАКТНОЕ ВЗАИМОДЕЙСТВИЕ ЖЕСТКОГО ЦИЛИНДРА КОНЕЧНОЙ ДЛИНЫ И УПРУГОПОЛУЗУЧЕГО ПОЛУПРОСТРАНСТВА

А. Шекян

В рамках линейной теории ползучести стареющих тел [1] рассмотрена пространственная контактная задача для упругоползучего полупространства, которое вдавливается жестким цилиндром конечной длины. Задача сведена к системе нелинейных интегральных уравнений, где к неизвестным функциям приложены интегральный оператор Фредгольма по пространственной координате и интегральный оператор Вольтерра по времени. Задача решается на основе математического аппарата ортогональных многочленов Чебышева [2] и принципа сжатых отображений [3].

Пусть жесткий цилиндр радиуса  $R$  и длиной  $2a$ , первоначально соприкасающийся вдоль своей образующей с поверхностью упругоползучего полупространства, вдавливает в это полупространство под действием внешних сил, равнодействующая которых  $P$  проходит через ось  $z$  (рис.). Тогда контактная область будет зависеть от времени  $t$  и иметь форму криволинейного четырехугольника  $\Omega(t)$ , ограниченного прямыми  $x = \pm a$  и кривыми  $y = \pm f(x, t)$  в плоскости  $oxy$ , где  $f(x, t)$  - положительная и четная по  $x$  неизвестная функция.

Реологические свойства полупространства будем описывать уравнениями линейной теории ползучести стареющих материалов [1].

Тогда условие контакта задачи можно привести к соотношению [3]

$$\frac{1-\nu^2}{\pi d} (l-l_0) \iint_{\Omega(t)} \frac{p(\xi, \eta, t) d\xi d\eta}{\sqrt{(x-\xi)^2 + (y-\eta)^2}} = \delta(t) - R + \sqrt{R^2 - y^2} \quad (1)$$

$(x, y) \in \Omega(t), t \geq t_0$



Օգտագործելով [1]-ում բերված պողպատ 45-ի ( $H_{PB}=83$ ) և պողպատ 40X-ի ( $H_{PB}=95$ ) պայմանական լարումների գրաֆիկները (նկ. 1ա և բ), վերը նշված մեթոդով կատարենք այդ նյութերի դեֆորմացման գրաֆիկների մոտարկումն աստիճանային ֆունկցիայով:



Գրաֆիկներից պողպատներ 45-ի և 40X-ի համար համապատասխանաբար ստանում ենք  $\varepsilon_{\text{վզ1}}=0.13$ ,  $\sigma_{\text{սո1}}=620$  ՄՊա և  $\varepsilon_{\text{վզ2}}=0.1$ ,  $\sigma_{\text{սո2}}=825$  ՄՊա: (2) բանաձևերից հետևում է, որ  $m_1 = \bar{\varepsilon}_{\text{վզ1}}^{-1} = \ln(1 + \varepsilon_{\text{վզ1}}) = \ln 1.13 = 0.125$  և  $m_2 = \ln 1.1 = 0.095$ : Օգտագործելով (2)-ը՝ համապատասխանաբար կտանանք  $B_1 = \sigma_{\text{սո1}}(1 + \varepsilon_{\text{վզ1}})^{-m_1} = 620 \cdot 1.13 \cdot 0.125^{-0.125} = 911$  ՄՊա,  $B_2 = 825 \cdot 1.1 \cdot 0.095^{-0.095} = 1137$  ՄՊա: Հետևաբար պողպատներ 45-ի և 40X-ի մոտարկված դեֆորմացման գրաֆիկները կունենան հետևյալ տեսքը

$$\sigma_{\text{45}} = 911 \cdot \varepsilon_{\text{45}}^{0.125}, \quad (3)$$

$$\sigma_{\text{40X}} = 1137 \cdot \varepsilon_{\text{40X}}^{0.095}: \quad (4)$$

Նկ 2-ում բերված են պողպատներ 45-ի և 40X-ի փորձնական իրական կորերի ( $\sigma_{\text{p}} - \varepsilon$ ) [1] և (3), (4) բանաձևերով մոտարկված նյութերի դեֆորմացման գրաֆիկների տվյալները:

Աստիճանային ֆունկցիայով մոտարկված նյութերի դեֆորմացման գրաֆիկների համեմատումը փորձնական ( $\sigma_{\text{p}} - \varepsilon$ ) կորերի հետ ցույց է տալիս, որ միջին (մինչև վզիկի առաջանալը) և մեծ (վզիկի առաջանալուց հետո) պլաստիկ դեֆորմացիաների դեպքում տվյալները բավական մեծ ճշտությամբ համընկնում են: Հետևաբար պլաստիկության տեսության տեխնոլոգիական խնդիրներ լուծելիս, երբ նյութը ենթարկվում է միջին և մեծ պլաստիկ դեֆորմացիաների, (3) և (4) բանաձևերի օգտագործումը հնարավորություն կտա հաշվի առնել նյութի իրական հատկությունները և այդպիսով բարձրացնել ստացված արդյունքների ճշտությունը:



Նկ. 2 Նյութերի փորձնական իրական կորերը [1] ( $\sigma_{\text{p}} - \varepsilon$ , հոծ գծերով): Կետերով ցույց են տրված (3) և (4) բանաձևերով մոտարկված նյութերի դեֆորմացման գրաֆիկների տվյալները:

Ինչ վերաբերվում է փոքր պլաստիկ դեֆորմացիաների դեպքում գրաֆիկների տարբերությանը, դա հոսունության հարթակի գոյության հետևանք է և այդ դեպքում անհրաժեշտ է օգտագործել իրական լարումների գրաֆիկների մոտարկման այլ ձևեր:

Գրականություն

1. Пономарев С.А. и др. Расчеты на прочность в машиностроении. — М.: Машгиз, 1958. — 974 с.
2. Сторожев М.В., Попов Е.А., Теория обработки металлов давлением М.: Машиностроение, 1974. 123 с.

## ТРИБОХИМИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ И АНТИФРИКЦИОННЫЕ СВОЙСТВА КОМПОЗИЦИОННЫХ ПОЛИМЕРНЫХ МАТЕРИАЛОВ

А.Карачетян

В настоящее время не вызывает сомнения тот факт, что существует функциональная взаимосвязь между важнейшими эксплуатационными характеристиками металлополимерной триботехнической системы изнашивания и трения и трибохимическими процессами, протекающими в зоне фрикционного контакта, и приводящими чаще всего к деструкции или структурированию полимерного связующего. Установление закономерностей протекания трибохимических процессов и разработка на этой основе методов управления структурой и свойствами полимеров представляют большой научный интерес для целенаправленного создания новых износостойких полимерных материалов и повышения эксплуатационных параметров современной триботехники. Следует учесть, что особое внимание привлекают композиции на основе многотоннажно выпускаемых термопластичных полимеров с развитой сырьевой базой. В связи с этим, в силу комплекса ценных физико-механических, трибологических и химических свойств, исследовались следующие известные полимеры: сополимер формальдегида с диоксолоном (СФД), полиамиды 6 и 66 (ПА6, ПА66) и полифениленоксида (ПФО), получившие все большее применение в машиностроении и приборостроении для изготовления подшипников скольжения, зубчатых колес, направляющих станков и т.д.

Цель настоящей работы - исследование трибохимических процессов и антифрикционных свойств при трении в поверхностных слоях гетероцепных полимеров и композиции на их основе методами структурной трибомеханики.

Исследование поведения при трении гетероцепных полимеров показало, что их антифрикционные свойства в значительной мере определяются природой трибохимических процессов, которые зависят от химического строения звена, цепи макромолекулы, разветвленности и структуры полимеров. Установлено, что трение СФД, ПА6 и ПА66 сопровождается выделением тех же продуктов деструкции, что и при термораспаде, а при трении ПФО наблюдается разница между продуктами термо- и трибораспада.

Характер трибохимических процессов при трении исследуемых полимеров связан с трибораспадом по основной цепи полимеров, причем при повышении скорости скольжения, когда подвижность надмолекулярных образований возрастает, интенсивность выделения продуктов трибораспада макромолекулы повышается, что способствует ухудшению физико-механических свойств "вторичной" структуры, а также антифрикционных свойств полимеров.

Для повышения трибоустойчивости материалов на основе гетероцепных полимеров использовали модифицированные фторалканами (отходы политетрафторэтилена) минеральные наполнители (МФМН), такие как травертин, мрамор, бентонит и туф, обладающие улучшенными смазывающимися свойствами. Результаты триботехнических испытаний, как и ранее полученные, показали перспективность и эффективность использования МФМН, приводящие к значительному снижению коэффициентов трения и повышению износостойкости композиций на основе СФД, ПА6, ПА66 и ПФО. Известно, что образование полимерной сшитой структуры оказывает значительное влияние на трибохимические процессы. С этой целью был проведен золь-

гель анализ для определения относительной вязкости растворимой части и содержания гель - фракции. Исследования образцов исходных и наполненных гетероцепных полимеров в зависимости от концентрации наполнения свидетельствуют, что вследствие химического взаимодействия МФМН с функциональными группами гетероцепных полимеров наблюдается как повышение молекулярной массы материалов, так и образование сетки межмолекулярных связей, что подтверждается возрастанием относительной вязкости растворимой части и содержания гель - фракции с увеличением концентрации наполнения (см. таблицу).

Таблица  
Зависимости относительной вязкости растворимой части, содержания гель - фракции и антифрикционных свойств гетероцепных полимеров от содержания наполнения

Состав композиции вес. %	Относительная вязкость	Гель - фрак- ция, вес%	$1 \cdot 10^{-9}$	$f$
СФД	3,5	0	10,29	0,15
СФД + 5% МФМН	5,1	17,8	9,8	0,14
СФД + 20% МФМН	5,9	38,6	4,2	0,11
СФД + 40% МФМН	6,2	48,7	2,2	0,08
ПА6	2,8	0	12,2	0,20
ПА6 + 5% МФМН	4,7	16,2	10,8	0,20
ПА6 + 20% МФМН	5,6	36,0	8,0	0,17
ПА6 + 30% МФМН	5,9	42,5	5,2	0,14
ПА66	3,1	0	10,5	0,22
ПА66 + 5% МФМН	4,9	15,6	10,0	0,22
ПА66 + 10% МФМН	5,5	26,0	7,2	0,18
ПА66 + 20% МФМН	5,7	34,5	4,8	0,15
ПФО	4,1	0	15,0	0,28
ПФО + 5% МФМН	5,9	14,5	14,2	0,25
ПФО + 20% МФМН	6,5	27,6	9,8	0,20
ПФО + 30% МФМН	6,8	36,5	5,4	0,16

Результаты таблицы свидетельствуют об образовании термически стабильной сшитой структуры во всех исследуемых гетероцепных полимерах при введении в них МФМН, что приводит к снижению интенсивности термо - трибораспада по основной цепи полимеров. Это позволяет значительно снизить величину коэффициента трения ( $f$ ) в широком интервале температур и повысить износостойкость ( $1 \cdot 10^{-9}$ ) полимеров.

## ИССЛЕДОВАНИЕ ВЛИЯНИЯ ТЕХНОЛОГИЧЕСКИХ ПАРАМЕТРОВ ФОРМОВАНИЯ НА РАЗМЕРНУЮ ТОЧНОСТЬ ПОЛИМЕРНЫХ ДЕТАЛЕЙ

А.Карпетян

Работоспособность и долговечность узлов трения различных машин и механизмов определяются не только антифрикционными свойствами полимерных материалов, но и не в меньшей степени технологической точностью размеров деталей (зубчатых колес, подшипников скольжения, втулок и т.п.), работающих в различных трибосопряжениях. В настоящее время в связи с невысокой технологической точностью полимерных деталей (12-14 квалитет точности) и низкой стабильностью их размеров при эксплуатации ограничивается эффективное применение многотоннажных термопластичных полимеров, таких как сополимер формальдегида с диоксоланом (СФД), полиамиды 6 и 66 (ПА6, ПА66) и полифениленоксида (ПФО).

Известно, что технологическая точность определяется колебаниями усадки, находящейся в тесной взаимосвязи с уровнем внутренних релаксационных напряже-

ний, возникающих при формировании изделия. Увеличение скорости прохождения релаксационных процессов приводит к значительному повышению стабильности размеров деталей.

Одним из способов повышения технологической точности изделий является подбор оптимальных технологических параметров процесса литья под давлением, обеспечивающих необходимую скорость релаксационных процессов. В большинстве работ исследования влияния на точность технологических параметров, рассмотрены в основном в отдельности или, реже, в совокупности (Брагинский Б.А., Ложечко Ю.П., Никитин Е.Г., Ушакова Н.Б., Бруммель М. и др.).

Целью работы явилось исследование влияния технологических параметров процесса литья под давлением на усадку (MS) и технологическую точность (2ΔΔ) размеров деталей из гетероцепных полимеров.

Исследования влияния технологических параметров на усадку и технологическую точность проводились на деталях типа "втулка" Ф22×12мм. В качестве размерных характеристик использовались наружный и внутренний диаметры втулки. Для всех экспериментов давление было принято постоянным.

Исследования влияния температуры расплава, температуры формы, времени выдержки под давлением и времени охлаждения на усадку и технологическую точность осуществлялись с помощью статического метода планирования многофакторного эксперимента. Величина и интервалы изменения независимых переменных, например для СФД, приведены в таблице.

Таблица

Уровни варьирова- ния	Обозна- чения	Температура, °С				Время, с	
		расплава, T <sub>p</sub>	формы, T <sub>ф</sub>	выдержки под давлением, t <sub>вдл</sub>	охлаж- дения, t <sub>охл</sub>		
						C <sub>1</sub> (X <sub>1</sub> )	C <sub>2</sub> (X <sub>2</sub> )
Основной	0	190	60	12		35	
Нижний	-1	170	40	8		25	
Верхний	+1	210	80	16		45	
Интервал варьирова- ния	ΔX <sub>1</sub>	180	50	10		30	

После проведения экспериментов по матрице планирования были получены результаты, количественно отражающие влияние указанных факторов X<sub>1</sub>, X<sub>2</sub>, X<sub>3</sub> и X<sub>4</sub> на усадку и технологическую точность изделий. В результате статистической обработки экспериментальных данных на ЭВМ получены уравнения регрессии (1)-(4), отражающие влияние названных факторов на усадку и технологическую точность.

Усадка и колебание размеров внешнего диаметра втулок:

$$MS = 1,834 + 0,0318X_1 + 0,0212X_2X_3 + 0,0184X_4^2, \quad (1)$$

$$2\Delta\Delta = 56,5124 + 3,5816X_2 - 3,7995X_4 + 2,46X_1X_2 + 4,9875X_1X_3 + 4,6148X_1X_4 + 1,9844X_2X_4 + 6,6408X_1^2 + 3,8224X_2^2 + 6,174X_4^2. \quad (2)$$

Усадка и колебание размеров внутреннего диаметра втулок:

$$MS = 1,8178 + 0,096X_1 - 0,0198X_1X_2 - 0,0196X_4, \quad (3)$$

$$2\Delta\Delta = 58,658 + 0,79X_1 + 3,37X_3 + 2,78X_2X_4 + 8,96X_2^2 + 1,68X_4^2. \quad (4)$$

Сравнение экспериментальных и табличных значений критериев Фишера показывает, что уравнения (1), (2), и (4) представляют адекватные модели, а уравнение (3) - близкие к адекватным математические модели.

Уравнения (1)-(4) показывают, что зависимости усадки и ее колебаний от технологических параметров процесса литья для внутреннего и внешнего диаметра не совпадают, что связано с различными положениями контролируемого размера и конструкцией изделия. Следовательно, поиск оптимальных условий переработки необходимо вести с учетом того, какой размер в изделии является определяющим. Оптимальные расчетные режимы для обеспечения максимальной технологической точности осуществлялись путем анализа поверхностей отклика, описываемых уравнениями по специальной программе на ЭВМ. Для внешнего и внутреннего диаметра втулки получены следующие результаты:

$$T_p = 190^\circ\text{C}, T_\phi = 70^\circ\text{C}, t_{\text{впл}} = 10\text{с}, t_{\text{охла}} = 32\text{с}, 2\Delta\Delta = 58\text{мкм}$$

$$T_p = 180^\circ\text{C}, T_\phi = 55^\circ\text{C}, t_{\text{впл}} = 8\text{с}, t_{\text{охла}} = 25\text{с}, 2\Delta\Delta = 52\text{мкм}$$

Приведенные результаты свидетельствуют о том, что технологическую точность изделий из СФД можно повысить за счет выбора оптимальных технологических параметров процесса литья под давлением с 12 до 10 качества точности. Аналогичные результаты получены для материалов ПА6, ПА66 и ПФО, соответственно повысив технологическую точность с 11 до 9 качества точности, а для ПФО - с 13 до 11 качества.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՊՏՈՒՅՑՈՎ ԲՈՆՑԵԼԵՂԹԱՅԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՄՍԿՈՒՄ  
Հ.Ահարոնյան, Ս.Չարությունյան

Ավտոմատ մեքենաներում ավանդաբար կիրառվող մաթյան, ատամնալծակային և այլ մեխանիզմների կողքին, որպես պարբերական պտտական (քայլային) շարժում կատարող մեխանիզմ, վերջին տարիներին, հաճախակի է դարձել շղթայալծակային մեխանիզմների կիրառությունը: Գոյություն ունեցող բազմաթիվ նմանօրինակ մեխանիզմներից նկ. 1-ում բերված են երկու սխեմաներ [1], որտեղ 1 մուտքի օղակի անընդհատ պտույտի դեպքում 2 ելքի օղակը (աստղանիվը) ստանում է պարբերական պտտական շարժում, որը սկսվում է հոծ գծով պատկերված 3 հողվակի դիրքից և վերջանում է նրա ընդհատ գծերով ցույց տրված դիրքում:

Այս մեխանիզմների հիմնական բերությունն այն է, որ ելքի օղակի շարժման սկզբում և վերջում ունեն արագացման նմանակի ֆունկցիայի խզում (տես աղ. 1, [1]), որն ուղեկցվում է հարվածներով, և դադարից հետո նաև տատանումներով:

Սույն աշխատանքի նպատակն է նշված մեխանիզմներում 1 տարիչը և 3 հողվակը բոցքով փոխարինելու միջոցով ապահովել 2 ելքի օղակի վրա արագացման նմանակի ֆունկցիայի անընդհատությունը:

Նախագծող բոցքի պրոֆիլի կորի ֆունկցիան պետք է լինի զույգ, ուռուցիկ, անընդհատ, մինչև երկրորդ կարգի ածանցյալը ներառյալ, պետք է ունենա ընդհանուր շոշափողներ կենտրոնական աստղանիվի բաժանարար շրջանագծի հետ տրված  $A_0, A'_0$  կետերում (նկ. 2), որոնք որոշվում են  $\varphi_0$  կանգառի անկյունով:

Ըստ վերը նշված պայմանների ունենք

$$f(x_{A_0}) = \sqrt{r^2 - x_{A_0}^2}, \quad (1)$$

$$f'(x_{A_0}) = -x_{A_0} / \sqrt{r^2 - x_{A_0}^2}, \quad (2)$$

որտեղ  $r$ -ը կենտրոնական աստղանիվի բաժանարար շրջանագծի շառավիղն է,

$$x_{A_0} = r \cos\left(\frac{\varphi_0 - \pi}{2}\right), \quad (3)$$

Մեխանիզմի  $\psi_w$  քայլային անկյունը կլինի

$$\psi_w = (2l - (2\pi - \varphi_0)r) / r, \quad (4)$$

որտեղ  $l$ -ը  $[0, x_{A_0}]$  միջակայքում  $f(x)$  կորի երկարությունն է՝

$$l = \int_0^{x_{A_0}} \sqrt{1 + (f'(x))^2} dx. \quad (5)$$

Սեր կողմից [2] աշխատանքում առաջարկվում է բունցքը պրոֆիլավորել  $y = ax^2 + b$  պարաբոլային ֆունկցիայով: Այս դեպքում մեխանիզմի  $\varphi_0$  կանգառի անկյունը փոփոխվում է 200°...230° սահմաններում:

Ստորև դիտարկվում են երկու տարբեր ֆունկցիաներ քառաստիճան պարաբոլ և էլիպս: Պարաբոլի հավասարումը ներկայացնենք հետևյալ տեսքով  $y = ax^2 + b$ , որտեղ  $a$  և  $b$  գործակիցները որոշվում են (1) և (2) պայմաններից՝

$$ax_{A_0}^2 + b = \sqrt{r^2 - x_{A_0}^2}, \quad 4ax_{A_0}^2 = -x_{A_0} / \sqrt{r^2 - x_{A_0}^2}:$$

Ըստ (4)-ի, հաշվի առնելով (3)-ը և (5)-ը կստանանք  $\varphi_0$  կանգառի անկյան արժեքները, կախված  $\psi_w$  քայլային անկյան արժեքներից: Այստեղ  $\varphi_0$ -ի արժեքները փոփոխվում են 187°...195° սահմաններում:

Ինչպես քառակուսային, այնպես էլ քառաստիճան պարաբոլների դեպքում քայլային անկյան յուրաքանչյուր արժեքին համապատասխանում է կանգառի անկյան միակ արժեքը, հանգամանք, որը սահմանափակում է մեխանիզմի կիրառման հնարավորությունը: Այս բերությունը կարելի է վերացնել՝ օգտվելով էլիպսի ֆունկցիայից: Այն ներկայացնենք հետևյալ տեսքով  $\frac{x^2}{a^2} + \frac{(y-d)^2}{b^2} = 1$ :

Այս դեպքում  $a$ ,  $b$  և  $d$  երեք գործակիցների միջոցով, քայլային անկյան յուրաքանչյուր արժեքի համար, կարելի է ստանալ կանգառի անկյան տարբեր արժեքներ՝ որոշակի սահմաններում: Ըստ (1) և (2) պայմանների կստանանք

$$\frac{b}{a} \sqrt{a^2 - x_{A_0}^2} + d = \sqrt{r^2 - x_{A_0}^2}, \quad (6)$$


$$\frac{b}{a \sqrt{a^2 - x_{A_0}^2}} = \frac{1}{\sqrt{r^2 - x_{A_0}^2}}, \quad (7)$$

Ընդունելով  $a$ -ն որպես ազատ պարամետր, տալով նրան տարբեր արժեքներ, ըստ (5)-ի և (6)-ի որոշվում են  $b$  և  $d$  գործակիցները: Հաշվարկները կատարվել են  $a = 1 \div 10$  արժեքների համար: Այս դեպքում կանգառի անկյան արժեքները ստացվում են  $195^\circ \div 205^\circ$  սահմաններում  $\psi_w = 30^\circ \div 180^\circ$  ցանկացած արժեքների դեպքում: Նշենք, որ  $a$ -ի ավելի մեծացնելը անիմաստ է, քանի որ այն աննշան է ազդում  $\varphi_0$ -ի փոփոխման վրա:

Նկ. 3-ում բերված է  $\psi_w$ -ի գրաֆիկը կախված  $\varphi_0$ -ից տարբեր ֆունկցիաների համար, որը կօգնի նախագծողին, ըստ պահանջվող  $\varphi_0$  և  $\psi_w$  արժեքների, ընտրել համապատասխան ֆունկցիան:

Բոլոր հաշվարկները կատարելու համար կազմված են ծրագրեր:

Վերջում ավելացնենք, որ առաջարկվող մեթոդով կարելի է հաշվարկներ կատարել նաև այլ ֆունկցիաների համար (կոսինուսային, շրջանագծային և այլն):




Գրականություն

1. Агаронян Г.Т. Ценные механизмы прерывистого движения. Арм НИИ научно-технической информации и технико-экономических исследований. Ереван, 1990. - 46 с.  
2. Агаронян Г.Т. Простирование кулачкового-ценных механизма шагового поворота //Известия вузов. Машиностроение. - 1987, №8.

ԵԼՔԻ ՕՂԱԿԻ ՄՈՏԱՎՈՐ ԿԱՆԳԱՌՔՆԵՐՈՎ ԱՏԱՄԱԼ ԾԱԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԻՆՈՅԶ


Ռ. Ջավախյան, Ա. Մխիթարյան

Ելքի օղակի մեկ կամ երկու մոտավոր կանգառքով հետադարձ շարժում վերարտադրելու համար օգտագործում են վեցօղակ լծակային մեխանիզմներ, որոնք բաղկացած են շարժաթևային կորի մեկ կամ երկու շրջանագծային տեղամասեր ունեցող քառօղակ լծակային մեխանիզմներից, որոնց շարժաթևային կետին ու հենակին միացվում են երկրորդ դասի կառուցվածքային խմբեր: Նշված շարժաթևային կորերի՝ քառօղակի համեմատությամբ փոքր տրամաչափերը պայմանավորում են մոտավոր կանգառքներով շարժվող ելքի օղակի համեմատաբար փոքր ընթացք:



Ելքի օղակի մեծ ընթացքով և բարձր ճշտությամբ մոտավոր կանգառքներով հետադարձ շարժումներ վերարտադրելու համար նպատակահարմար է օգտագործել մուլտակային ատամնավոր մեխանիզմների սատելիտային կետի հետագծեր, քանի որ այս դեպքում այդ կորի տրամաչափերը համաչափելի են մուլտակային մեխանիզմի տրամաչափերի հետ: Որպես ուսումնասիրության օբյեկտ վերցված են ներքին կառչումով եռօղակ մուլտակային ատամնավոր մեխանիզմներ, որոնք բաղկացած են 1 մուտքի տարիչից, 3 կենտրոնական անշարժ ատամնավորից և 2 սատելիտից, որի M կետի հիպոցիկլոիդային հետագծի M1M3 ուղղագծային (Նկ. 1) և շրջանագծային (Նկ. 3) մասն օգտագործվում է ելքի 5 օղակի մոտավոր կանգառքով շարժում ստանալու համար:

Ելքի օղակի երկու ծայրային դիրքերում մոտավոր կանգառքներ ստանալու համար օգտագործվում է  $u_{23} = u = R/r = 4/3$  փոխանցման հարաբերությամբ ներքին կառչման ատամնավոր փոխանցումը (Նկ. 1): Այս դեպքում սատելիտային M կետի հետագիծը քառակուսան է և նրա M1M3 և M2M6 տեղամասերն օգտագործվում են 5 սողնակի մոտավոր կանգառք ստանալու համար:



Ելքի 5 օղակի մեկ մոտավոր կանգառքով հետադարձ շարժում ստանալու համար վերցնում են  $u = R/r = 3$  (Նկ. 3) Այս դեպքում եռաթև հիպոցիկլոիդի M1M3 շրջանագծային տեղամասում մոտավոր կանգառք ստանալու համար հարկավոր է 4 շարժաթևի L երկարությունը մոտ վերցնել այդ տեղամասի կորության ρ շառավղին ( $L = \rho + \delta$ , որտեղ δ-ն ազատ չափ է, որի միջոցով կարելի է լավարկել կանգառքի ճշտությունը): Ելքի օղակի մոտավոր կանգառքի անճշտությունը գնահատենք ճշգրիտ կանգառքից շեղումը նկարագրող

$$\varepsilon = 100 \cdot \Delta/H = 100 \cdot |x - x_m|/H \quad (1)$$

պարամետրով, որը որոշում է սխալանքի տոկոսը: (1)-ում x-ը ելքի օղակի դիրքը որոշող ընթացիկ կորորհիսան է,  $x_m$ -ը՝ նրա միջին արժեքը մոտավոր կանգառքի ընթացքում, իսկ H-ը՝ ընթացքը:

Ելքի օղակի շարժման օրենքի համեմատական վերլուծությունը կիրականացնենք նրա արագության ( $k_v$ ), արագացման ( $k_a$ ) և դինամիկ իզոդրոմյան ( $k_p$ ) չափաբաժնի գործակիցներով, որոնք որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$k_v = \max \frac{dx}{d\varphi_1} \cdot \frac{\omega_1 \cdot t_{01}}{H}, \quad k_a = \max \frac{d^2x}{d\varphi_1^2} \cdot \frac{(\omega_1 \cdot t_{01})^2}{H}, \quad k_p = k_v k_a \quad (2)$$

որոնցում  $t_{01}$ -ը  $M_0 M_1 = H$  ընթացքի տևողությունն է,  $\varphi_1$ -ը և  $\omega_1$ -ը մուտքի օղակի պտտման անկյունն ու անկյունային արագությունը (Նկ. 1):

Ելքի օղակի հետադարձ պտտական շարժման դեպքում (Նկ. 4) (1) և (2) բանաձևերում պետք է կատարել  $x \rightarrow \varphi_5, H = \Psi$  փոխարինումները:

u-ի տրված արժեքի դեպքում (1) և (2) պարամետրերի արժեքները կախված են սատելիտային կետը դիրքորոշող  $d = BM$  չափից և 4 շարժաթևի երկարությունից կամ δ չափից: Ըստ այդ չափերի որոշվել են  $\max \varepsilon \leq 1\%$  ճշտությամբ մոտավոր կանգառք ապահովող մեխանիզմների ընտանիքները,  $\min \max \varepsilon$  ապահովող  $\delta = f(d)$  մեխանիզմները, որոնց համար (2) բանաձևով որոշվել են ելքի օղակի հետադարձ շարժման օրենքը բնորոշող գործակիցների արժեքները:

Յաշվարկման արդյունքներով կազմվել են կոռեկցիոն բանաձևեր և դիագրամներ (Նկ. 2), որոնցում A-ն ներկայացնում է ճշգրիտ կանգառք ապահովող բոնցքային մեխանիզմներում օգտագործվող շարժման օրենքներին համապատասխանող գործակիցները, B-ն՝ ուսումնասիրվող երկկանգառք մեխանիզմը (Նկ. 1), B1-ը և B2-ը՝ ծայրային դիրքերից մեկում մոտավոր կանգառքով սողնակային և ճոճալծակով մեխանիզմները (Նկ. 3):

Ստացված արդյունքների վերլուծությունից հետևում է, որ դիտարկվող մեխանիզմները, ապահովելով մոտավոր կանգառքի բավականին բարձր ճշտություն ( $\min \max \varepsilon = 0.04 \pm 0.2\%$ ), միաժամանակ ապահովում են նաև (2) գործակիցների հավասար կամ ցածր արժեքներ բոնցքային մեխանիզմների նկատմամբ:

Մյուս կողմից, ստացված կոռեկցիոն  $\varepsilon = z(d, \delta)$  բանաձևերը թույլ են տալիս իրականացնել համապատասխան մեխանիզմի կինեմատիկ սխեմայի նախագծումը ըստ  $\varepsilon = \min \max \varepsilon, k_v, k_a, k_p$  չափանիշներից յուրաքանչյուրի:

ՍԿԱՎԱՌԱԿԱՎՈՐՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼԱԿԻ ԹՐԹՈՒԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԵԼԻ ՅԱԿԱՔԼՈՎԱԿՈՐՄԱՆ ՅԱՄԱԿԱՐԳՈՒՄ Ա. Քախյան


Փորձարկումներն իրականացվում են ավտոմոբիլի սկավառակակոճղակավոր արգելակի աշխատանքային բնութագրերը (սկավառակի և կոճղակի շփման մակերևույթի ջերմաստիճանը, արգելակման ճնշումը, սկավառակի պտտման արագությունը, կոճղակի թրթռումները) հակաբլոկավորման արգելակային համակարգում հետազոտելու նպատակով: Յակաբլոկավորման համակարգը հակադարձ կապով կառավարման համակարգ է, որ ըստ անվի դանդաղեցման չափի կարգավորում է ճնշումն արգելակում անիվները բլոկավորվելուց կանխելու համար: Յակաբլոկավորման համակարգը նմանակող էլեկտրոնային սարքի միջոցով չափման սխեման պատկերված է Նկ.1-ում:

Արգելակային մոմենտը թեմպոսկոպի միջոցով վեր է ածվում էլեկտրական ազդանշանի, որն ուժեղարարի միջոցով տրվում է հակաբլոկավորման համակարգի աշխատանքը նմանակող սարքին: Սարքը, համեմատելով ազդանշանի արժեքը սահմանված շեմի հետ, համապատասխան կերպով ազդում է հիդրոլանցների միջոցները շարժման մեջ դնող էլեկտրական շարժիչի վրա, փոքրացնելով կամ մեծացնելով արգելակային շարժաբերում ճնշումը, և այդ ցիկլն անընդհատ կրկնվում է մինչև արգելակային սկավառակի կանգառքը:

Յակաբլոկավորման համակարգի աշխատանքը նմանակող սարքը հնարավորություն ունի փոփոխելու ճանապարհային պայմանները, այսինքն՝ այն սահմանային շեմի արժեքը, ըստ որի սարքը ստուգում է ուժեղարարից ստացված ազդանշանի մեծությունը, ինչը հնա-


րավորություն է տալիս բավարար չափով վերարտադրել ավտոմոբիլի շահագործական պայմանները արգելակման ընթացքում:

Փորձերը կատարվում են ԱՍ-1 արգելակային իներցիոն ստենդի վրա տեղակայված սկավառակալորակավոր արգելակի վրա: Սկավառակի պտտման արագությունը չափվում է տախոգենրատորի միջոցով: Շփման մակերևույթի ջերմաստիճանը գրանցվում է սկավառակի շփամակերևույթից 0.5 մմ հեռավորության վրա տեղադրված «բրոմ-կոպել» թերմոդույզի օգնությամբ: Կոճակի թրթռումները թե՛նզուտվիչների միջոցով կերպափոխվում են էլեկտրական ազդանշանի և գրանցվում են ձայնային ալիքների տեսքով համակարգի օգնությամբ:



Նկ.1. Հակաբլոկավորման համակարգը նմանակող սարքի (ա) և արգելակային բնութագրերի չափման (բ) սխեմաները

Փորձարկումը կազմված է յոթ տարբեր հաջորդականություններից (Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ և Է) (Նկ.2): Յուրաքանչյուր հաջորդականություն կազմված է տասնչորս արգելակումից որոշակի կցման պայմանների (անվի և ճանապարհի միջև կցման ֆ գործակցի) համար:



Նկ.2. Գիտափորձի իրականացման ընթացակարգը


Չափման արդյունքների ճշտությունը բարձրացնելու նպատակով Նկ. 2-ում պատկերված ցիկլը կրկնվում է երկու անգամ, որի արդյունքում ստացվում է 196 արգելակում: Փորձարկումների ժամանակ արգելակային ճնշումը հասցվում է մինչև 2 ՄՊա, որպեսզի ապահովվի հակաբլոկավորման համակարգը նմանակող սարքի գործարկումը: Արգելակման պրոցեսը սկսվում է 120 կմ/ժ ավտոմոբիլի արագությանը համապատասխան սկզբնական արագությունից:

Յուրաքանչյուր հաջորդականության ժամանակ մինչև արգելակումը ստենդի իներցիոն զանգվածները եռաֆազ էլեկտրաշարժիչի օգնությամբ պտտվեցվում են համապատասխան համախոսությամբ, որից հետո էլեկտրական հիդրոիդրիչի միջոցով արգելակային սարքում մեծացվում է աշխատանքային ճնշումը և սկսում է արգելակման հերթական ցիկլը: Համակարգի միջոցով գրանցվում են շփազույգում առաջացող թրթռատատանումները և արգելակման ժամանակը: Յուրաքանչյուր արգելակման վերջում գրանցվում է նաև շփազույգի ջերմաստիճանը: Արգելակումների միջև ընկած ժամանակը կազմում է 1 րոպե:

Փորձարկումներն ավարտելուց հետո համակարգում գրանցված տվյալները մշակվում են Sound Forge 4.5 հատուկ ծրագրային փաթեթի միջոցով, որի օրինակը պատկերված է Նկ. 3-ում:

Արգելակային սարքերում իրականացվող փորձարկումները սովորաբար անց էին կացվում առանց հաշվի առնելու ճանապարհի ազդեցությունը արգելակի աշխատանքի վրա: Կախված ճանապարհի հետ անվի կցման ֆ գործակցի արժեքից՝ արգելակման ընթացքում

անվիլը բլոկավորվում է (սկավառակը արգելակային կոճակների նկատմամբ չի պտտվում), սակայն ավտոմոբիլը շարունակում է ընթացքը սահքի տեսքով: Առաջարկվող մեթոդիկան հնարավորություն է տալիս հաշվի առնել ավտոմոբիլի հակաբլոկավորման արգելակային համակարգի ազդեցությունը ընդհանուր առմամբ և հետագոտել բուն արգելակի աշխատանքային բնութագրերն այդ պայմաններում:



Նկ.3. Արգելակային կոճակի տատանումների սպեկտրը

ՄԵՏԱՂԱՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՇՓԱԿՊԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԹՈԴԻԿԱ  
Ա. Պողոսյան, Ա.Իսաջանյան, Կ. Հովհաննիսյան, Գ.Սարգսյան

Մետաղալիմերային շփահպակի բնութագրերի հաշվարկային մեթոդիկան մշակված է շփանյութափոխանցման աղիեզիոնա-էներգետիկական մոդելի և շփման մոլեկուլային-մեխանիկական տեսության օրինաչափությունների հիման վրա, հաշվի առնելով կոմպոզիտային շփանյութերում որպես լցանյութ օգտագործվող հանքանյութերի ազդեցության գործոններ: Մեթոդիկան առաջարկվում է վիրտուալ փորձերի հիման վրա շփազույգի հատկությունների բարելավման հնարավոր ուղիների վերլուծության նպատակով:

Մետաղալիմերային շփազույգի հպման փաստացի մակերեսի հաշվարկման համար կիրառվում է շփվող մարմինների մակերևույթների խորրոգորությունը սֆերիկ սեգ մենտեն-րի տեսքով մոդելավորման սկզբունքը, որոնք, ըստ շփամակերևույթի մշակման տեսակի բաշխված են ըստ բարձրության որոշակի օրենքով: Հպման փաստացի մակերեսի կախումը  $\rho_c$  տեսակարար ճնշումից դիտարկվում է աշխատանքային պայմանների հնարավոր չորս դեպքի առաձգական ոչ հագեցած, առաձգական հագեցած, պլաստիկ ոչ հագեցած և պլաստիկ հագեցած հպակների համար: Իրական հպման մակերեսի արժեքն առաձգական ոչ հագեցած հպակի համար, օրինակ, հաշվարկվում է հետևյալ կերպ

$$A_r = \frac{A_c}{2} \cdot \left( \frac{\rho_c \cdot (1 - \mu^2)}{0.21 \cdot \nu \cdot (\nu - 1) \cdot k_i \cdot E_0 \cdot e^{-\gamma \cdot (\theta - \theta_0)} \cdot \sqrt{\Delta}} \right)^{\frac{2\nu}{2\nu - 1}} \quad (1)$$

որտեղ  $N$  -ը նորմալ ուժը,  $\mu$  -ն Պուասոնի գործակիցը,  $k_i$  -ը  $\nu$  -ից կախված գործակից,

$\Delta = R_{max} / R \cdot b^2$ ՝ միկրոերկրաչափական բնութագիրը,  $b$ -ն և  $\nu$ -ն մակերևույթի հենքային կորի պարամետրերը,  $R_{max}$ -ը և  $R$ -ը անհարթությունների բարձրությունն ու շառավիղը:

Շփման ուժը հաշվարկվում է այն պայմանից, որ մետաղական հակամարմնի մակերևույթը պատված է շփանյութափոխանցման պոլիմերային թաղանթով, հետևաբար շփումն իրականացվում է փաստորեն միջպոլիմերային շփահպակում: Համաձայն շփման մոլեկուլային-մեխանիկական տեսության, շփման ուժը (շփման գործակիցը) բաղկացած է երկու բաղադրիչից՝  $\mu$  մոլեկուլային, որն առաջանում է աղիեզիայի կամրջակների խզումից և  $\rho$  մեխանիկական, որն առաջանում է միկրոանհարթությունների դեֆորմացիայի պատճառով: Շփման գործակցի  $f_m$  մոլեկուլային բաղադրիչը հպակի փաստացի մակերեսի վրա

$$f_m = \frac{A_r \cdot \tau_{n_{max}} \cdot \left( -\psi \frac{\theta}{\theta_m} \right)}{N} \quad (2)$$

որտեղ  $\tau_{n_{max}}$  -ն աղիեզիայի կամրջակների խզման առավելագույն ամրությունն է (ընդունված է պոլիմերային նյութի ամրությանը հավասար),  $\theta$  -ն մակերևութային ջերմաստի-

ճանը,  $\theta_m$ -ը պոլիմերային նյութի հալման ջերմաստիճանը,  $\psi$ -ն գործակից, կախված նյութի տեսակից:

Շփման գործակցի մեխանիկական (կամ դեֆորմացիոն)  $f_d$  բաղադրիչը հաշվարկելիս դիտարկվում է երկու դեպք առաձգական և պլաստիկ հպակների: Մետաղապոլիմերային շփահպակին առավել բնորոշ առաձգական հպակի դեպքում շփման գործակցի  $f_d$  դեֆորմացիոն բաղադրիչը հաշվարկվում է ավելի ցածր կոշտություն ունեցող մարմնի (պոլիմերային նյութի) մակերևութային շերտի դեֆորմացմանը համապատասխան, հաշվի առնելով  $\alpha_{ef}$  հիստերեզիսային կորուստները

$$f_d = 0.25 \cdot \alpha_{ef} \cdot p_c^{1/5} \cdot \Delta^{2/5} \cdot \left( \frac{1 - \mu^2}{E_0 \cdot e^{-\gamma(\theta - \theta_0)}} \right)^{1/5} \quad (3)$$

Ընդունելով, որ շփման ուժի կատարած աշխատանքն ամբողջովին վերածվում է ջերմության, հաշվարկվում է շփման ընթացքում անջատվող ջերմաքանակը: Ընդ որում պոլիմերային նյութի մեջ թափանցող տեսակարար ջերմային հոսքը

$$q_c = \frac{(1 - \alpha_{hd}) \cdot N \cdot f \cdot v_s}{A_r} \quad (4)$$

որտեղ  $\alpha_{hd}$ -ն ջերմային հոսքերի բաշխման գործակիցն է:

Շփման ընթացքում անջատված ջերմության ազդեցության տակ տեղի է ունենում ջերմաստիճանի աճ մակերևութային միկրոանախրությունների վրա: Շփահպակում ակնթարթային ջերմաստիճանի հաշվարկման նպատակով դիտարկված է  $r_0$  շառավիղ ունեցող շրջանային հպակի միջով կիսատարածական մարմնի տաքացման ոչ ստացիոնար խնդիրը: Խնդրի լուծումը շրջանային առաձգական հպակի կենտրոնական առանցքի վրա հաստատուն ջերմային հոսքի դեպքում

